

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/7

25 օգոստոսի 2015 թ.

Քննարկվեց «Կ.Ի.Սկրյաբինի անվան Մոսկվայի անասնաբուժական բժշկագիտության և կենսատեխնոլոգիայի պետական ակադեմիա» ԲՄԿԴՊԿԵՄ-ի 29.07.2015 թ-ի գանգատը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը չկիրառելու վերաբերյալ:

«Կ.Ի.Սկրյաբինի անվան Մոսկվայի անասնաբուժական բժշկագիտության և կենսատեխնոլոգիայի պետական ակադեմիա» ԲՄԿԴՊԿԵՄ-ի գանգատում բերված փաստարկները.

2015թ.-ի հուլիսի 20-ին «Կ.Ի.Սկրյաբինի անվան Մոսկվայի անասնաբուժական բժշկագիտության և կենսատեխնոլոգիայի պետական ակադեմիա» ԲՄԿԴՊԿԵՄ-ն (այսուհետ նաև Կազմակերպություն) ծանուցում է ստացել Կենտրոն ՀՏ-ից 2014թ-ի փետրվար ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկն անվավեր ճանաչելու մասին, որտեղ զգուշացվում է, որ կազմակերպության նկատմամբ կկիրառվեն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի դրույթները:

Հաշվի առնելով այն, որ 2014 թ-ի մարտի 1-ից 20-ը կազմակերպչական և տեխնիկական որոշ խնդիրների պատճառով կազմակերպությունը չէր կարողանալու ուղարկել եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկը, այն ուղարկվել է հաշվետու ամսվա վերջին օրը, ավելի հստակ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1 հոդվածով սահմանված ժամկետից 2.5 ժամ առաջ՝ 2014թ-ի փետրվարի 28-ին, ժամը 21.31-ին (կից ներկայացվում է էլեկտրոնային ծանուցումը): Հաշվետվության կազմման և ուղարկման ժամանակ որևէ հուշում կամ հղում անհամապատասխանության վերաբերյալ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1 հոդվածին, կայքի կողմից չի եղել, չնայած սովորաբար, կայքն անհամապատասխանությունների վերաբերյալ միշտ հուշումներ է տալիս:

Հիմնվելով ստացված էլեկտրոնային ծանուցման վրա Կազմակերպությունը համարել է, որ հաշվետվությունը ճանաչված է վավեր և որևէ խախտում չի արձանագրվել, հակառակ դեպքում, անցած 18 ամիսների ընթացքում Կազմակերպությունն ինքնուրույնաբար կուղղեր կատարված խախտումը:

Ելնելով վերոգրյալից՝ Կազմակերպությունը խնդրում է չկիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը, քանի որ կազմակերպությունը գլխամասի կողմից հաստատվող տարեկան բյուջեյով աշխատող ուսումնական հաստատություն է և ցանկացած ամենաչնչին լրացուցիչ ծախս կամ հարկային պարտավորություն կարող է կանգնեցնել լուծարման փաստի առաջ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Կ.Ի.Սկրյաբինի անվան Մոսկվայի անասնաբուժական բժշկագիտության և կենսատեխնոլոգիայի պետական ակադեմիա» ԲՄԿԴՊԿՆԵՄ-ի (այսուհետ նաև գանգատաբեր) կողմից 2014 թ-ի փետրված ամվա եկամտային հարկի ամփոփ հաշվարկը (այսուհետ նաև Հաշվարկ) ներկայացվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ: Մասնավորապես, 2014 թ-ի փետրվար ամվա համար Հաշվարկը էլեկտրոնային եղանակով ներկայացվել է մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը՝ 28.02.2014 թ-ին:

Թեև համակարգի կողմից Հաշվարկը համարվել է վավեր, սակայն ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 20.07.2015 թ-ի գրությամբ գանգատաբերին տեղեկացվել է Հաշվարկը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ ներկայացված լինելու մասին: Արդյունքում, Գանգատաբերի կողմից ներկայացված Հաշվարկը դիտվել է չներկայացված, ինչը հիմք է հանդիսացել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու համար:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ 2014 թ-ի փետրված ամվա եկամտային հարկի ամփոփ հաշվարկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետից շուտ ներկայացնելը պայմանավորված է եղել կազմակերպչական և տեխնիկական որոշ խնդիրներով, այսինքն՝ թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ Կազմակերպության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, կատարված են: Մասնավորապես, թեև խախտվել է հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունների ընթացակարգը, սակայն դրա արդյունքում պետական բյուջեին վնաս չի պատճառվել, չի թաքցվել հարկվող շրջանառությունը, ինչպես նաև՝ վճարման ենթակա պարտավորությունները:


Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Կ.Ի.Սկրյաբինի անվան Մոսկվայի անասնաբուժական բժշկագիտության և կենսատեխնոլոգիայի պետական ակադեմիա» ԲՄԿԴՊԿՆԵՄ-ի գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.Մ.ԻՐՈՒՄՅԱՆ

